


ՀՐԱԶԱՆԳ

ՎԱՖ-ԵՐՈՒՄ ԳԱՐԱԱԱ-ԱՍԱՌԱՅԻՆ ՁՐՁԱ-
ՆՈՒՄ ՎՈՉԽԱՐԱԵՐԻ ԱՐԱՅԱՅԻՆ ՊԱՀ-
ՎԱԾՔԻ ՑԵՎ ԲՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОЗЕДЕННИЯ
Академии Наук
СССР



ԱՆ
ԲԻ
I

ԿՅՈՒՂՑՐԱՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

636
2-99

Са 34-К
Са 841

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

30 JUL 2010

I. ՎՈՉԻԱՐՆԵՐԻՆ ԶՄԵՐԱՅԻՆ ՊԱՀՎԱԾՔԻՑ ԱՐՈՏ
ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼԸ

1. Վոչիարների նախապատճենումն արոտ դուրս բերելը համար

Նախ քան վոչիարներին արոտ դուրս բերելը պետք է նը-
րանց զննել և վերացնել այն ամենը, ինչվոր կարող է խանգա-
րել նրանց ազատ շարժմելուն։ Պետք է կտրել պճեղների ավե-
լորդ մասերը։ Զման ընթացքում ուժեղ կերպով աճուծ կռն-
դակները պետք է կտրել, վորովհետեւ, հակառակ դեպքում, նրանց
արանքները լցվում են ցիխ, վորը չուրանալով՝ առաջ ե բերում
ուռուցք, վորի հետեանքով և վոչիարն ախում է կաղաք։

Մերինոս և կիսակոպտաբուրդ վոչիարների աչքերի շուրջը
դատնվող մազերը պետք է խուզել։ Պետք է խուզել նաև բոլոր
ցեղի վոչիարների վերջին ազդրների ներքին մասերի և պոչի
վրայի մազերը, իսկ մաքիների մոտ, նաև կրծի վրայի մաղերը,
վորպեսզի այդ տեղերում դատնվող բուրդը չկեղտութիւն ու փչանա
և վոչիարների շարժմելը չդժվարանա։

Հղի մաքիների հիշյալ մասերի մազը պետք է խուզել և պը-
հեղները կտրել գառնածնության սկզբից 3—4 շաբաթ առաջ։

2. Հուենրի վերակազմնելը խոօսը ՎԱՅ-ԵՐԵՎԱՐ

ՎԱՅ-ԵՐԵՎ նախ քան արոտ դուրս բերելը, պետք է վիրանա-
յեն իրենց հոտերի կազմավորումը և համալրումը, առանձին խըմ-
բերով առանձնացնեն ձմրան ընթացքում շատ նիհարած վոչիար-
ներին, ստերջ մաքիներին, խոյերին, մատղաշներին։ Անհրաժեշ-
տության դեպքում կարելի յե ստերջ մաքիներին միացնել նաև
շիշակներին ու թոխլիներին։

3. Վամիները յեզ ծծող գառները պետք է պահպեն առանձին հօսերով

Մերունդը լավ պահպանելու նպատակով, չի թույլատրվում
հոտերի վիրակաղմերու աշխատանքը և այդ հոտերը հանձնել մեկ
ուրիշ բրիգադի, վորը զուգավորման և գառնածնության աշխա-

17.06.2013

21.357

տանքներին չեւ մասնակցել, յեթե այդ հանձնելն առանձնապես անհրաժեշտ չեւ:

Խոշոր վոչխարաբուծական ապրանքային ֆերմաները, վոչքունք ունեն զանազան ցեղի վոչխարներ, հոտերը պետք եւ կազմեն վոչ միայն հիշյալ նշանների հիման վրա, այլև ըստ ցեղերի, իսկ յեթե բոնիտիրովկա կատարված եւ, այլև ըստ դասերի:

Խոշոր ՎԱՅ-ԵՐՈՎԱՆ հոտերի մեծությունը չպետք եւ անցնի հետեւալ նորմաներից.—

ՏԵՂԵՐ ԶԵՎ ԽՄԲԵՐ	ՀԱՍԱԿԱ- ԳՐԻ ՎՈՉ- ԽԱՐՆԵՐ	ԳՐԱՆԵՐ	ՄԱԿՐՅ., ԿԴ և ՎՈՐՃ ՉԼՇՎԱԿՆԵՐ
Կիսակռպատա- բուրդ ցեղեր	տոհմական ոգասպարժական	400 5-600	300 400 500
Կոպտաբուրդ	տոհմական ցեղեր	400 600	300 400 600

Տեղական և արոտային պայմաններից յելնելով, վերոհիշյալ նորմաները կարող են փոփոխվել:

4. Տարբեր խումբ վաչխարներին առա հանելու եւրականությաւնը

Մսուրային պահվածքից արոտայինին անցնելիս՝ պետք եւ տռաջին հերթին արոտ հանել ստերջ մաքիներին և կրտածներին, ապա ձմեռն անցկացրած մատղաշներին (գառներին), ավելի ուշ՝ խոյերին, ամենից վերջը՝ յերբ տաք յեղանակները կըսկեն, մաքիներին և ծծող գառներին:

5. Արոտի հանելու ժամկետը

Վոչխարներին գարնանն արոտ դուրս բերելը տարբեր շրջաններում տարբեր ժամկետներում և կատարվում, նայած յեղանակին, հողին և արոտի դրությանը: Զի կարելի վոչխարներին քշել գեպի բավարար չչորացած արոտները, վորպեսզի կանաչ-մատղաշ բռոյսերը չտրորվեն և կերը չպակասի: Սառնամանիքների ժամանակ վոչխարներին արոտ չպետք եւ հանել, գորպեսզի փորուսուցք չառաջանա և հզի մաքիները չվիժեն:

6. Վաչխարների կերպումն առօտի առաջին որերին

Մսուրային պահվածքից արոտային պահվածքին պետք եւ անցնել աստիճանաբար: Առաջին որերը վոչխարներին արոտում

պետք եւ պահել 3—4 ժամից վոչ ավելի: Իսկ առավոտյան՝ վոչխարներին սովոր արոտ չնուղարկել, այլ նախապես կերպարել քիչ խոտով: Յերեկոյան՝ արոտից վերադառնալիս՝ տալ սովորական յերեկոյան բաժին կերը:

Յերբ արոտը կլավանա՝ և վոչխարներն ավելի յերկար ժամանակով կլինեն արոտում, փարախում կերպարելն աստիճանաբար կարելի յեւ դարձնել որական մեկ անգամ (առավոտյան) և բոլորվին դադարեցնել: այն ժամանակ, յերբ վոչխարներն ամբողջովին վերջնականապես անցնում են արոտային պահվածքին:

II. ԱՐՈՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՈԶԽԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ՎՈՅՆԱՄԱՐՑԵՐԻ հարմար արտօները

Վոչխարների համար ամենալավ արոտներն են համարվում չոք արոտները, մարգագեինները և խողանը:

Աղահողամասերում պետք եւ արածեցնել վոչխարներին միեցն չոք յեղանակին, վորովհետև անձըներից հետո վոչխարները կարող են վոռ տեղերում հավաքված անձրսաշրից չափեց դուրս շատ խմել և սատկել ստամոքսի բորբոքումից:

2. ՎԱՅԽԱՐՑԵՐԻ համար վնասակար արտօները

Խոնավ, հաճացած արոտներն անպետք են վոչխարների համար: Այդպիսի արոտներում վոչխարները վարակվում են ճիճուներով և խոնագությունից նրանց կճակները ցավում են:

Զի կարելի վոչխարներին թողնել այնպիսի արոտներ, զարունք ծածկված են վոչխարների համար վնասակար, թունավոր բույսերով, զորոնք են՝ ձիածետ, ալպյան վոլոռ, խլոպուզ, խնտամոլին, ակոնիտոն և այլն:

Իսկ յեթե արոտում կան քիչ քանակությամբ թունավոր բույսեր, անհրաժեշտ նախ քան վոչխարներին արոտ բաց թողնելը, մաքրել այդ վնասակար բույսերից:

III. ԱՐՈՏՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԼԱՆԸ

ՎԱՅ-ԵՐԻ հատկացված արոտների ոգտագործման պլանը պետք եւ կատարել մինչեւ արածեցման շրջանը: Այդ պլանի մեջ հետագայում կարելի յեւ ուղղում մտցնել նայած թե ինչքան կանչ կա առոտներին արոտամասերում:



Արոտամասերի ոգտագործումը պետք է կատարել ըստ պը-
լանի, հետևյալ հերթականությամբ.—

1. Գարնանային արտօնեց

Կանուխ գարնանը վոչխարներին պետք է սկսել արածեց-
նել պյուղի մոտակա արոտներում և հարուսներում։ Այդ մասերում
գարնանն ավելի շուտ և կանաչը բարձրանում և հողը պինդ լի-
նելով, հնարավոր և արածեցնել վոչխարներին՝ առանց բույսերը
տրորելու։

Խոտհարքներում արածեցնելն աբգելելուց հետո, պետք է
սկսել ոգտագործել ավելի վատ հարուսները և անմշակ հողերը
(լավերը թողնել խոտհարքի համար), արածեցնելով ավելի բարձ-
րագիր չոր տեղերը, իսկ ավելի հարուստ արոտները թողնել ա-
մառվա միջին։

2. Ամառային արտօնեց

Առաջին հնարավորության դեպքում, դեռ շոգերը չընկած,
անհրաժեշտ և վոչխարների հոտերը քշել ինոնային արոտները։

3. Աճանային արտօնեց

Աշնանը վոչխարներին կրկին պիտի քշել զյուղին կից ա-
րոտները և հարուսները, վորտեղ մինչ այդ բուսականությունը
նորից աճած և լինում։ Ուշ աշնանը, յիրք ձմեռն սկսում և մո-
տենալ, արոտային խնամքի վերջին շրջանում, բուլոր հոտերը պի-
տի վերադարձնել իրենց ձմեռելու տեղերը։

Մայրական փարախներին (վորտեղ պիտի տեղի ունենա-
գառնաճնությունը) մոտիկ պետք ե առանձնացնել և առանց արա-
ծեցնելու պահել արոտամասեր, վորտեղ հետագայում պետք և ա-
րածեն մաքիները։

Սառնամանիքներից հետո պետք և ոգտագործել այն ա-
րոտները, վորոնք ծածկված են ամառը վոչխարների կողմից չը-
կերպած սև յեղինով (յավշան) և ուրիշ բուսականությամբ։

4. Զմեռային արտօնեցի ոգտագործումը

Այն շրջաններում, վորտեղ հնարավոր և ձմռանը վոչխար-
ներին արածեցնել, գարնանից պետք և թողնել հատուկ արոտա-
մասեր լավ բուսականությամբ գետերի յեղերքներին, այնտեղ քը-
շել վոչխարներին ամարային և աշնանային արոտներն ոգտագոր-
ծելուց հետո։

5. Կերի ապահովագրական ժողովի ուժեղծումը

Բնական պատահարներից խուսափելու համար (յերկարատե-
ձմեռ, խոր ձյան) անհրաժեշտ և ամառային և ձմեռային արոտ-
ներում ստեղծել կերի ապահովագրական ֆոնդ։

IV. ԱՐՈՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԻ ԽՄԲԵՐԻ ՄԻՋԵՎ

Խոշոր ՎԱՅԵՐՈՒՄ (500 գլխից ավելի) վոչխարների առան-
ձին խմբերի համար պետք և հատկացնել առանձին արոտամա-
սեր։ Ամենալավ արոտները պետք և հատկացնել գառ ունեցող
տոհմական մաքիներին։ Գառնաճնության ժամանակ նրանք
պետք և արածեն փարախներից վոչ հեռու (այդ նպատակով աշ-
նանից հատուկ արոտներ են թողնվում), վորպեսզի դառները շատ
հիսու գնալով չհոգնեն և հնարավորություն լինի վատ յեղա-
նակների գեպքում նրանց ժամանակին պատսպարել փարա-
խում։ Բավող վոչխարները և ծծից կտրած զառները պետք և ա-
րածեն լավ արոտներում։ Կթու մաքիները պետք և արածեն ա-
վելի հյութալի և կանաչ մասսայով հարուստ արոտներում։ Բրա-
վող վոչխարներին պետք և հատկացնել խողանը և փափուկ հա-
րուսները։

Խոյերին, առանձնապես մերինուսներին, վորոնք ավելի շատ
են ներկում շողից, պետք և հատկացնել փարախից վոչ հեռու
գտնվող արոտամաս, այն հաշվով, վոր շոգ ժամանակ հնարավո-
րություն լինի նրանց քշել սավերու տեղ։ Իսկ յեթե այդ հնա-
րավոր չե, այդ գեպքում անհրաժեշտ և արոտատեղում շինել թե-
թեվ ծածկոցներ շվաքի համար։ Բոլոր ՎԱՅԵՐՈՒՄ, անկախ հո-
տի մեծությունից, խոյերը պետք և արածեն մյուս խումբ վոչ-
խարներից առանձին՝ մաքիներից հեռու արոտամասներում։ Խո-
յերին ջուր պետք և խմեցնել ըստ հնարավորության, մաքիների
ջուր խմելու և քշելու ձանապարհներից հեռու տեղում։

Այն կոլտնտեսություններում, վորտեղ արոտները քիչ ենք
վոչխարներին կարելի յե արածեցնել այն արոտամասներում, վո-
րոնք նախապես ոգտագործված են ձիերի և տավարի կողմից,
սակայն վոչ նրանց հետ միասին։

Արոտի ոգտագործման կանոններն այդ գեպքում են
նույնը, ինչ վոր միայն վոչխարների համար հատկացված արոտ-
ների մասին տալից։

V. ԱՐՈՏԻ ՊԱՀԱՆՁԸ ՀԱՇՎԵԼԸ

1. Արոտատեղերի քանակը, վոր անհրաժեշտ և վոչխարների առանձին հոտամասերի համար, վորոշվում և տեղում՝ նայած առոտի վորակի տարողությանը:

Լեռնային արոտներում արոտային ամբողջ ժամանակաշրջանի համար անհրաժեշտ և 5 գլուխ վոչխարին մոտովորապես 1 հեկտար միջին վորակի բնական արոտավայր:

Արհեստական արոտներում—առվույտի և բազմամյա խոտաբույսերի ցանքսերի դեպքում, 1 հեկտարի բեռնվածությանը կարելի յե հասցնել 10 գլխի:

2. Խոշոր ՎԱՖ-ԵՐԸ (1000 գլխից ավելի) արոտների ոգագործման կարգը սահմանելիս, պետք ե իրքու պահեստի թողնեն 150—200 հեկտար արոտամաս, վորտեղ կարելի կլինի, վորեն համաձարակ յերեալու դեպքում, տեղափոխել հոտերը և սահմանել կարանտին:

VI. ՎՈԶԽԱՐՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔՆ ԱՐՈՏՈՒՄ

1. Վոչխարների համար վետակայտ արոտային պայմանները

Առանձնապես զգույշ պետք ե լինել և չթողնել վոչխարներն արածեն ցող, յեղյամ և շաղ դրած ժամանակ, ուժեղ անձրևիներից հետո, սառը հյութալի կանաչին: Այդ բոլորից առաջանալում և փորուռուցք, վիժում, մրսելուց առաջացող հիվանդություններ և վոչխարների կաղալը:

2. Վոչխարների գիշերեկու և եղի բնուրույնը

Յերբ կոկովին կայուն, տաք և չոր յեղանակները, բոլոր խըմբերի վոչխարներին, դրանց թվում նաև մաքիներին իրենց դառների հետ, լավ կլինի այլևս չթողնել, վոր փարախներում գիշերնեն, այլ թողնել բաց արոտում կամ մակաղատեղում գիշերնեն, վորովինետե տաք յեղանակներին փարախներում կուտակվում են վոչխարների արտադրած գուղքիները, առաջանում ե խոնավություն, փշանում ե բուրդը, վոչխարները հավանդանում են և շատ դանդաղ են կաղղուրվում, նույնիսկ շատ լույլ գործանային արոտներում:

Վոչխարների գիշերեկու համար արոտում պետք ե ընտրել խմելու ջրից վոչ շատ հոռու տեղ (0,7—0,1 կիլոմետր): Կառնուխ դարնանը և աշնանը գիշերեկու տեղը պետք ե լինի արո-

տի գողավոր-վուս մասերում և պաշտպանված սառը քամիներից, իսկ շոգ ամարային գիշերները՝ բարձրադիր մասերում, վորտեղ աղատ շարժվում ե քամին:

3. Թրվա կարգն արօնում

Մինչև ուժեղ շոգերն սկսվելը վոչխարներն արածում են ամբողջ որը և գիշերեկու տեղն են գալիս միայն գիշերը: Ծոգ ժամանակ վոչխարներին պետք ե սկսել արածեցնել լույսը բացվելուն պես և շարունակել մինչև առավույան ժամի 9—10-ը, վորից հետո, շոգն սկսելուն պես, հոտամասը ըերել մակաղատեղը, (կացատեղը), վորովինետի շոգ ժամանակ վոչխարները չեն ուտում, այլ խոնվում են իրար մոտ գլուխները կախ գցած: Յերեկը մակաղատեղում պետք ե հետևել, վոր վոչխարները մեծ խմբերով մի տեղում չխոնվեն՝ վորովինետն այդ գրությամբ նրանց մարմին տաքության ճառագայթացումը (դուրս առաջ) թուլանում ե, տաքության ճառագայթացումը գրանցում է, առաջանակ յերեալու դիմումը կարող են ջերմանար լինել ու սատկել: Դրա հետևանքով նրանք կարող են ջերմանար լինել և ցրի իրուչովիներից մեկը պետք ե միշտ հետեւ այդ բանին և ցրի խմելու ջրատեղը, վորից տաքացը մակաղատեղից քշվում ե դեպի խմելու ջրատեղը, վորից տաքացը մակաղատեղից քշվում ե այնտեղ մնում և մինչև գիշերված ժամուն անցնում ե արոտ և այնտեղ մնում և մինչև գիշերված ժամը—1-ը: Վորպեսզի վոչխարները լրիվ կերպով կշտանան, գիշերային արածեցումը պարտադիր ե:

4. Ցերեկվա հանգստաելի բնուրույնը

Ցերեկվա հանգստատեղը պետք ե լինի շոգից պաշտպանված:

Տվյալ արոտաման ոգտագործելու ամբողջ ժամանակաշրջանում պետք ե աշխատել ոգտագործել մինսույն կացատեղը և ջանում պետք ե աշխատել ոգտագործել մինսույն կացատեղը և ջանում պետք ե աշխատել արոտը և վորը տաքածություն, վորովինետն այդ տեղը շուտ խիստ արորվում են, նրանց վրայի բույսերը դժվարությամբ են զիրածում և հետագայում այդ մասերի վրա վոչխարները վատ են արածում: Զի կարելի վոչխարներին հանգստացնել նաև հին կողմանակի (ոտար) կացատեղերում, վորովինետն դա վատանդագոր ե վոչխարների վարակումների տեսակետից:

Կացատեղը (հանգստատեղ) ցանկապատելու կարիք չկա: Լավ կշտացած հոռը կացատեղից չի հետանա մինչև արածելու ժամանակը: Վոչխարներին աղախների մեջ անելն ավելորդ ե, վորովինետն վոչխարները իրուր տեղը ճիշվում և վասպում են:

Կացատեղը կարելի յե փոխել միայն այն ժամանակ, յերբ էին կացատեղի շուրջը գտնվող ամբողջ արոտատեղը կերցված եւ:

Յ. Հոտի պատճենությունը

Հոտի պաշտպանությունը թե արոտում և թե կացատեղում պետք ե լավ կազմակերպված լինի: Հոտի մեջ մշտապես պետք ե լինեն վոչ պակաս 2—3 շուրջ հովիթներին ոգնելու համար: Կացատեղում շները պետք ե դասավորվեն նախրի չորս բոլորը: Հովիթները սալլերի հետ միասին պետք ե տեղափորվեն կացատեղի քամուն յենթակա մասում, այդ դեպքում վոչխարներն ավելի առահով կլինեն դայլերից, վորոնք սովորաբար հոտին մոտենում են քամու հակառակ ուղղությունից, վորապես իրենց մարմնի հոտը քամին տանի և շները չիմանան:

Յ. Վոչխարների հաւաքառումն արօտում

Սրոտային պահվածքի ժամանակ պետք ե խուսափել վոչխարներին ավելորդ տեղ ճիշելուց: Վոչխարներին հաշվելը նրանց նեղ ձանապարհով (ռազոլ) քշելու յեղանակով պետք ե կատարել յուրաքանչյուր ամսի վերջին, վոչ հաճախակի, ընդ վորում ամսվա ընթացքում պետք ե պահել պակասող վոչխարների հաշվը, յենթադրնով վոր մյուսներն առկա յեն: Յեթե անհրաժեշտ ե վոչխարներին տանգկացնել տախտակներից պատրաստած նեղ ձանապարհով՝ հաշվելու ճիճուներով և քոսով՝ վարակվածներին, այլ և կթուներին առանձնացնելու նպատակով, այդ պետք ե կատարել վոչխարների սոված և ջուր չխմած ժամանակ. այդ գեպքում նրանք ավելի հեղտ են դիմանում այդ գործողությանը և շատ չեն տուժում: Նեղ ձանապարհ պատրաստելիս պետք ե հետեւել, վոր վոչխարները նրա միջով գնան արևի ուղղությամբ սավերի հետեւից:

Մաքիների կիթը նույնպես պետք ե այն հաշվով կազմակերպել, վոր նախրը վորքան կարելի յե քիչ ճիշվի, դրա համար սպատութելով կիթելու գաղպյահներ, այսպէս հատուկ դաստիք վորմաժը և այլ միջոցներ գործադրելով:

Յ. Նեղ ձանապարհ (ռազոլ) պատճառելը


Յերբ ողտագործվում են փարախներից 5 կիլոմետրից ավելի հեռու գտնվող արոտները, անհրաժեշտ ե հոտի հետ ունենալ վահանատախտակներ և ցցեր՝ կացատեղում նեղ ձանապարհ

պատճառտելու համար: Նեղ ձանապարհն իրենից ներկայացնում ե 0,5—0,7 մետր լայնությամբ անցք («նըրբանցք»), շինված վահանատախտակներից, վորոնք կազմված են գետնին խփված ցցերից: Այդ ձեռով պատճառտված անցքի մի կողմի վրա նրան կից նման վահանատախտակներից շինվում ե փոքր աղալ («օճարօք»), վորը միանում ե անցքի («ստրոնկ») հետ մի փոքրիկ դռան միջոցով («Փորտկա»): Նրբանցքի մուտքի կողմում ամրացվում են վահանատախտակներ թևերի նման, վորպեսդի ավելի հարմար լինի վոչխարները ներս քցելու համար: (Ռազոլի սխեման տես ներքեւում):

Հաղար գլուխ վոչխարի հոտի համար նեղ ձանապարհ շինելիս պետք ե ունենալ 13—15 վահանատախտակ 3,0—3,5 մետր յերկարությամբ և 1 մետր բարձրությամբ և 15—18 հատ ամուր փայտի ցցեր:

VII. ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԱՐՈՏԱՅԻՆ ԲՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԲՏՈՒՄԸ

Բաման պետք ե յենթարկվեն ՎԱՖ-ի կողմից իրեւ մսացու խոտանված բոլոր վոչխարները, այն եւ պառավելերը, ատամները թափած մաքիները և խոյերը, հասուն կրած վոչխարները և մատղաշ վորձերը:



Յեթե գերման ունի 50 գլխից ավելի խոտանված վոչխարներ, լավ կլինի նրանց բանել առանձին խմբով, խակ յեթե 50-ից պակաս են, կարելի յե բանել ընդհանուր հոտում:

Չի կարելի մը խմբի մեջ միասին բանել մաքիներին, շիշակներին և չամորձատված խոյերին, վորովհետև քաշի ավելացնալու փոխարեն հակառակ հետեւլանքներ կստացվին:

Խոշոր ՎԱՖ-երում, վորտեղ բավում են 1000 գլխից ավելի վոչխարներ, պետք ե կազմել բառով հոտեր ըստ վոչխարների բառվածության և մատղաներին բանել հասուն վոչխարներից աշ-

ռանձին Այդ կհեշտացնի արոտների բաշխումը և կարագացնի բառումը:

Այն մաքիներին, վորոնք ջոկված են իբրև մսացու, չպետք է կթել, այլ պետք եւ սկսել բան գառը նրանից անջատելուց անմիջապես հետո:

1. Թեվող վոչխարեների խուզի ժամկետները

Մորթելու համար նշանակված վոչխարների խուզը պետք եւ կատարել այն հաշվով, վոր ստացվեն՝ մուշտիկամորթիներ: Կոուտաբուրդ վոչխարները պետք եւ խուզվեն վոչ ռւշ, քան մորթելուց 2 ամիս առաջ: Նրաբառուրդ վոչխարները և նրանց մետիսները մորթելու մոմենտին պետք եւ ունենան 2—2,5 սմ.՝ ից վոչ պակաս բարձրություն ունեցող բուրդ:

Յեթե մետիս կրտածները հանձնվում են իբրև մսացու վոչ թե աշնան վերջին, այլ ավելի շուտ, այդ գեղքում նրանց աշնան խուզը պետք եւ կատարվի վոչ պակաս քան մորթելուց $2\frac{1}{2}$ ամիս առաջ:

2. Թեման ժամկետը

Բտման միջին ժամկետը վորոշվում է $2\frac{1}{2}$ —3 ամիս: Վոչխարների բառումը պետք եւ սկսել այն հաշվով, վոր վերջանա վ. մ. կողմից մսամթերման պլանը՝ կատարելու ժամկետին:

Վոչխարների բտման վերջացած լինելը վորոշվում է նրանց բտվածության աստիճանով և կերի բազայի դրությամբ:

Վոչխարներին իբրև մսացու պետք եւ հանձնել բառումը դադարեցնելուց անմիջապես հետո, վորպեսզի բաշը չպակասի:

3. Թեման ընթացքի հաւաքառումը

Վոչխարների բտվածության աստիճանը վորոշվում է վողնաշարը գոտկատեղի մոտերքը վերեկց շոշափելու միջոցով (յերիկամունքների մոտերքը): Լավ բտված վոչխարներին շոշափելիս ձեռքի տակ զգացվում եւ կաշվի և ճարպի շերտի թեթև շարժունությունը, կողերը չեն զգացվում, իսկ նիհար վոչխարների կաշին անշարժ եւ լինում և վոսկորները շոշափվում են:

Բացի այդ, բտվող վոչխարների չաղության աստիճանն իմացված եւ բրդի տեսքից: Լավ բտված վոչխարի դլիսի մոտ, շընորհիլ այն հանգամանքի, վոր վզի կաշվի տակ ճարպ և կուտակված, բուրդը ցից կանգնած եւ «հովհարի» նման:

Ճարպապոչավոր վոչխարները լավ բտվելուց հետո ունենում են այնքան լիքը դմակ, վոր ձեռքը դժվարությամբ կարելի յեւ անցկացնել նրա տակը:

Բտման հետևանքով նորմալ քաշի հավելում նախնական քաշի համեմատությամբ ընդունվում է $20-30\%$, նայած ցեղին, հասակին, վոչխարների խմբերին: Բտվող վոչխարների քաշի հավելումը՝ նախնական քաշի համեմատությամբ՝ մեր ցեղերի համար սահմանվում է մոտավորապես հետեւյալ շկալայով (տոկոսներով).—

Լավ աճ միջակ աճ վատ աճ	30—25 $\%$	20 $\%$	15 $\%$
Մերինոս վոչխարների համար	25—20 $\%$	18 $\%$	13 $\%$

Բտման ընթացքն ստուգելու համար բտվող հոտում պետք առանձնացվի կանտրոլ խումբ, վորը կազմի բտվող հոտի 5% -ից վոչ պակասը. այդ խմբի մեջ պետք եւ մտնեն միջակ չաղության վոչխարները:

Կոնտրոլ խմբի վոչխարներին բտումից առաջ պետք եւ կշռել այնուհետև պարբերաբար պետք եւ կշռել 20 որը մեկ անգամ: Նրանց քաշի հավելումով վորոշվում է ամբողջ հոտի քաշի հավելումը և յեթե պարզվում է, վոր բառումը լավ չի գնում, փոփոխություններ են մայցնում նրա ընթացքի մեջ: Այստեղ, վորտեղ կշռելը հնարավոր չե, բտման ընթացքի հաջողությունը վորոշվում և շոշափելով և հոտը զննելով, այլև կշռելով՝ իբրև մասցւ հանձնելու ժամանակ:

Կանտրոլ խմբի վոչխարներին մյուսներից զանազանելու համար զլիների վրա ներկով նշան են անում:

4. Թեվող վոչխարեների հավելյալ կերակրումն ուժեղ կերերով

Մատղաշ վործ վոչխարներին ավելի հաջող կերպով բտելու համար յերաշաի գեղքում պետք եւ նրանց լրացուցիչ կերակրել ուժեղ կերերով: Բտման սկզբնական շրջանում ամեն մի գլխին 100 գր, ուժեղ կերը համարվում եւ բավարար նորմա: Այդ նորման աստիճանաբար ավելացնել և բտման շրջանի վերջում հասցնել ամեն մեկին որական մինչև 200 գրամի: Լավ արտ լինելու և ճիշտ արածեցնելու գեղքում հավելյալ ուժեղ կեր տալու կարիք չկա: Պառավ անատամ վոչխարներին, յեթե անհրաժեշտ են նրանց բըտումն արագացնել, խորհուրդ եւ տրվում առանձին գեղքում հավելյալ ուժեղ կեր տալ ամեն մի գլխին որական 0,2—0,6 կգ:

VIII. ԱՐԱԾԵՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Կոլտնտեսության յեկամուտը բարձրացնելու համար՝ բոլոր տնտեսական հնար ավորությունների ոգտագործումը պահանջում է առանձնապես խնտաքով ոգտագործել արոտատեղերը։ Կերցված բուսականությունն ընդունակ է արագ վերաճելու և նորից ծառայելու իրեն արոտ, մինչդեռ տրորվածը թոռոմում և չորանում է։

Վոչխարներին ճիշտ արածեցնելը հենց նրանումն է կայանում, վոր նրանք կշտանան՝ լրիվ ոգտագործելով և վոչ թե տրորելով արոտը։ Դրա համար անհրաժեշտ է պահպանել հետեւյալ կանոնները։

1. Արոտամասերի ոգտագործման հերթականությունը

Ամբողջ արոտատեղը (գարնանային անմշակ հողամասերը, հարոսը, խողանը, ահլուկը և ալին) պետք է բաժանել առանձին կտորների, հավասարաչափ բաշխել նրանց ոգտագործումը, նոր արոտամաս տեղափոխելով վոչխարներին միայն այն ժամանակ, յերբ նախորդ արոտամասը հիմնականորեն կերցված է։ Այդպիսի կարդ սահմանելիս վոչխարները միշտ թարմ կանաչ կարածեն։

Վոչխարներին արոտ հանելիս առավոտյան չպետք է նրանց անմիջապես բաց թողնել թարմ արոտամասը, այլ արդեն 1—2 անգամ ոգտագործվածը։ Յերբ այդտեղ վոչխարները կսկսեն կշտանու, պետք է տեղափոխել թարմ արոտամասի վրա։

2. Հոտի օսրժումն արոտում

Պիտք է սովորեցնել վոչխարներին կերը վերցնել միանգումից, հենց վոր կացատեղից սկսում են շարժվել և գնալ բաց շարքով։

Հոտը պետք է արածի հանգիստ, պետք է գնա համաշափ, բաց ողակով, վորովհետև հակառակ դեպքում ուժեղ վոչխարները ուտում են ամենալավ թարմ խոտը, իսկ թույլերն այնքան չեն արածում, վորքան վազում-հասնում են ուժեղներին։

Նայած հոտի մեծությանը, մեկ կամ յերկու հովիվ պետք է գտնվեն հոտի առաջը, վորպեսզի այն հավասարեցնեն և չթողնեն, վոր արագ առաջ շարժվի, առանձնապես այդ անհրաժեշտ է սառը և խոնավ յեղանակներին։ Հոտը պետք է շարժվի այն ժամանակ, յերբ արդեն լինել կերել և այդտեղի խոտը։ Յերրորդ հովիվը գնում է հետևից և քշում հետ մնացող վոչխարներին։

Արածեցնելու ժամանակ պետք է հաշվի առնել յեղանակի դրությունը, քամու ուղղությունը և արեի գիրքը։ Արոտային շրջանի ավելի սառը ժամանակ վոչխարներին կացատեղից առավոտյան պետք է քշել քամու հակառակ ուղղությամբ, այն հաշվով, վոր յերեկոյան նորից կացատեղ քշել քամու ուղղությամբ։ Շոգ որերին պետք է վարպետ հակառակը—առավոտյան հոտը շարժել քամու ուղղությամբ, իսկ վերագրանալ կացատեղ, ցելեկված հանգստի համար, քամու հակառակ ուղղությամբ։ այլ կերպ վոչխարները շոգ ժամանակ առաջ չեն շարժվի և կարիք կլինի նրանց «ջարդելով» առաջ քշել։ Արեւ հոտի շարժման ժամանակ միշտ պետք է լինի կողքից կամ հետևից, վորովհետև այլ կերպ վոչխարները լավ չեն տեսնում, ախորժակով չեն արածում և շատ կանաչ են տրորում։

IX. ԱԼ ՏԱԼԸ

Ամբողջ արոտային ժամանակաշրջանում վոչխարներին պետք է տալ աղ կացատեղում, ըստ վորում լավ կլինի տալ քարաղ լիզելու համար։ Յեթե կոլանտեսություն մեջ աղը բավական չե և վոչխարներին աղ տրվում ե ընդհատումներով, այդ գելքում պետք է աղը շաղ տալ փոքրիկ բաժիններով։

X. ԶՐԵԼԸ

1. Վոչխարների ջրելու ենդի բնորուրյունը

Հոտի լավ դրության համար մեծ նշանակություն ունի վոչխարներին կանոնավոր կերպով մաքուր թարմ ջրով բավարարելը։ Չի կարելի վոչխարներին խմեցնել ջրամբարների կանգրելը։ Չի կարելի վոչխարներին լակներից (ջրափոսերից), վորովհետև նաև ամսային աղը կարող են մասսայականորեն վարակվել ճիճուներով և այլ հիվանդություններով։ Դրա համար ել այդ տեղերը պետք է ցանկալապատել։

Առենից լավ և խմեցնել աղբյուրի, գետի կամ թարմ հորի ջուր։

Այնտեղ, վորտեղ հորեր չկան և համարավոր չե պատրաստել, և ստիպված պետք է ուղարկել լճակների կանգնած ջրից, անհրաժեշտ է լճակի կողքին շինել փոսեր և այնտեղ առվի միջնով ջուր անցկացնել, հախապես առվի մեջ լցնելով մանր խիճ և կես մասն

ավաղ, կամ ավելի լավ և ավելացնել փայտի ածուխ։ Այդ կլինի
հասարակ և ամենահժան ջրագտիչը։

2. Զբանական համապատաստումն արուային ժամանակաշրջանի համար

Պետք է կատարել հետեւյալը.—ՎԱՅՆԻ կողմից ողագործվելիք
բոլոր հորերն արոտային շրջանի սկզբին պետք է լինեն մաքըր-
ված, նորոգված և կահավորված ջրամբարձ հարմարություննե-
րով՝ բաքերով և ջուր խմելու տաշտակներով։ Հորի շուրջը զրտ-
նվող հրապարակը և ջրի տաշտակի յերկու կողմերը պետք է
լինի հավասարեցնած, մասն խճով և ափազով լցրած և պնդաց-
րած։ Հորի շուրջը գտնվող հրապարակը պետք է հորի բերանի
մոտ և տաշտակների մոտ ափելի բարձր լինի և տափառանաբար,
վոչ շատ ուժեղ թեքությամբ իջնի, վորպեսդի տաշտակների մոտ
ցիս չհափաքվի և ցեխաջուրը հորի մեջ չլցվի։

Հորը պետք է ապահովի ամբողջ հոտի ամենորյա ջրի պա-
հանջը։ Վորպեսդի ջուր խմելը յերկար չտեսի, ջուրը նախապես
պետք է հանվի ու լցվի փայտե կամ ցեմենտե ավազանների մեջ,
վորպեսդի պետք է լինեն ջրի տաշտակներից քիչ ափելի բարձր տե-
ղավորված։ այդ ափազաններից ջուրը փողը ակների միջոցով ինք-
նահոսով թափվում է ջրատաշտակների մեջ ըստ պահանջի։

Զրելու տեղը պետք է ապահովված լինի ջրատաշտակներով
այն հաշվով, վոր փոքր ՎԱՅՆԵՐՈՒՄ միաժամանակ այնտեղից կա-
րողանան ջուր խմել բոլոր փոչխարները (մինչեւ 200 դրուխ), իսկ
մեծ ՎԱՅՆԵՐՈՒՄ՝ 200—250 դրուխ։ Գառների համար անհրաժեշտ
է հենց այդ տեղում դնել ափելի ցածր ջրատաշտակներ և հետեւ,
վոր գառները նույնպես մաքուր ջուր խմեն և վոչ թե ջրափոսերի
ջրից։

3. Վոչխարների ջրանելերը կարգին պահելը

Հետեւ, վոր ջրհորների մոտ ցիս լինի, դրա համար ան-
հրաժեշտ է բոլոր փոս տեղերը լցնել ափազով կամ գետի մասը
քարերով։ Զրելու ժամանակ սովորաբար փոչխարները խսնվում
և փոշի յեն բարձրացնում, վորը ծածկում ու փչացնում և ա-
ռանձնապես մերինոսի բուրգը։ Անհրաժեշտ է գրանից խուսա-
փելու համար ջրելուց առաջ ջրատաշտակների շուրջը գետնին
ջուր շաղ տալ։ Տաշտակները ջրելուց առաջ պետք ամեն որ լվա-
նալ հատուկ կոչտ ափելով՝ հատակին նստած և կողքերին կպած
ցիսն ու ափազը մաքըրելու համար։

4. Զբելու ժամանակը

Եսոք ամառային որերին փոչխարներին պետք է ջրել ամեն
որ, հետեւելով, վոր բուրգը կուշա խմեն, առանձնապես կթու և
ծծմայր մաքիները։

Ամառը վոչխարներին պետք է ջրել ցերեկվա հանգստից
հետո, յերկրորդ անգամ արոտի հանելուց առաջ։ Գարնանը և աշ-
նանը պետք է ջրել արածեցնելուց հետո՝ կաշտեղը կամ փարա-
խը վերագանալուց առաջ։

Տաքացած հոտը ջրի վրա չպետք է թողնել։

5. Զբելու ժամանիկան

Վոչխարներին ջուր խմելու պետք է թողնել փոքր խմբե-
րով՝ 150—200 դրուխ, հերթով առանձնացնելով նրանց ջրհորից
հեռու տեղափորված հոտից այն հաշվով, վոր միաժամանակ տե-
ղավորվեն ջրատաշտակների շուրջը։ Յերբ մի խումբը խումում հե-
ռանում է, մոտեցնում են հետեւյալ խումբը, և այսպես հերթով
բոլոր խմբերը, մինչև վոր ամբողջ հոտը խումբի։

XI. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախ քան վոչխարներին արոտ հանելը, անհրաժեշտ է արո-
տատեղը զննել անասնաբուժական-սանիտարական տեսակետից

Պետք է սահմանել կանոնավոր կերպով, ամսական մեկ ան-
դամից վոչ պակաս, հոտի և արոտատեղի անասնաբուժական-սա-
նիտարական դննումը։

Հովիվը պետք է աշալուրջ կերպով հետեւի իրեն հանձնված
հոտի վոչխարների առողջությանը։

Հովիվ-կոլխոզիները, վորոնք պահում և կերակրում են
վոչխարներին, առանձնապես ուշադրություն պետք է դարձնեն,
վոր նրանց մարմինը (կաշին) չորդնոտի և չվարակվեն քոսով։
Վոչխարների մարմնի վրա յեղած ամենափոքր վերքերի, իսկ հա-
մախ փտած մասերի վրա հովիվների անփութության գեղփում,
անհերթ ձու յեն դնում, վորոնցը զարգանում են վորեր (թրբ-
թուներ), վորոնք մեծ զնան են հասցնում հոտին։

Ամենից շատ վորդնոտամ են խոյերը—հատկապես սեռա-
կան անդամի ծայրի կաշին և յեղցուքների հիմքի մոտը, իսկ
մաքիների մոտ—հետանցքի շուրջը, սեռական որգանների մո-

մերքը ճարպապոչավոր ցեղերի մոտ—սկզի ճարպային բարձի վրա, առանձնապես նրա նիհար ծայրի վրա:

Այդ տեղերը պետք է սիստեմատիկ կերպով դնել, վորդերը հեռացնել և բոլոր վերքերը լվանալ և քսել ախտահանիչ և հոտափետ նյութերով, վորտնշից ճանահրը խրանում են (կրեոլին, ձութ, յեղջերուցի յեղջուրի յուղ բևեկնի (սկիպիդար) հետ և այլն:

Վորդնոտած վոչխարները նշան են արվում պայմանական նշանով (կետ կամ ուրիշ նշան) ներկով ճակատի վրա կամ գոտեկատեղում, վորպեսովի հետագայում նրանք աչքաթող չարվեն, այլ բժշկվեն կանոնավոր կերպով:

1. Պայքար բափ դեմ

Յեթե նկատվում է, վոր վոչխարներն իրենց քորում են, պետք ե այդպիսիներին լավ զննել և պարզել՝ քոսով վարակված են, թե՞ վոչ: Յեթե պարզվեց, վոր քոս է, հիվանդ վոչխարներին անմիջապես պետք ե առանձնացնել և քոսով վարակված տեղերը լվանալ կրեոլինի 20% լուծույթով:

2. Վարակիչ հիվանդությունների տարածվելու առաջն առնելը

Արոտատեղերում վոչ վարակիչ հիվանդություններից սատակած (կամ ստիպված մորթված) վոչխարներից հանած մորթիները պետք ե խիտ աղել և փաթաթել բուրդը դեպի դուրս (վերև): Յեթե հնարավոր չե մորթիներն անմիջապես ուղարկել կոլտնտեսության կամ ՎԱՖ-ի պահեստը, աղած և փաթաթած դրությամբ պահպան են շների համար անժամանակ տեղում 4—5 որ, վորից հետո չորացվում են շվաք տեղում և ապա պահպան մինչև հանձնելը չորազած դրությամբ: Սիբիրախտից սատկած վոչխարների մորթիները հանձնելն արգելվում է՝ վարակի տարածումից խուսափելու նպատակով:

Այն կոլտնտեսությունները, վորոնք ունեն կամ գտնվում են ուտիլարքավորմերի գործունեյության շրջանում, իրենց մոտ սատկած վոչխարների դիակները պարտավոր են հանձնել այդպիսիներին՝ վերամշակման համար: Յեթե ուտիլարքավորմեր չկան, այդ դեպքում սատկած վոչխարների դիակները պետք ե թաղել վոչ պակաս, քան 2 մետր խորությամբ անասնագերեղմանցում: Դիակներն ուտիլ սարքավորումները և անասնագերեղմանոցները պետք ե փոխադրել կոլտնտեսության կողմից

սատկած կենդանիներին տեղափոխելու համար առանձացված դիակատար սայլով: Այն բոլոր գեպքերում, յերբ վոչխարները հանկարծակի յեն սատկել, այլ և յերբ կասկած կա, վոր վարակիչ հիվանդություն և (սիբիրախտ, ճաղիկ և այլն), մորթիները չըպետք ե հանել, պետք ե դիակներն առանձնացնել և անմիջապես հրավիրել անասնաբուժիչներին:

XII. ՀՈՎԻՎՆԵՐԻ ԲԻՒԳԱԴԻ ԽՎԵՆՏԱՐԸ ՅԵԿ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Հովիվ-կոլտնտեսականների բրիգադը, վորը գնում ե հեռավոր արոտատեղերը, ամբողջին պատասխանառու յե հոտի ամբողջության վիճակի համար և նա պետք ե հետն ունենա անհրաժեշտ գործիքներ, դեղեր և տնտեսական իրեր նորմալ աշխատանքի և հոտին ժամանակին ոգնություն ցույց տալու համար:

Այն բրիգադները, վորոնք պետք ե ոգտագործեն հեռավոր արոտատեղերը, հոտի հետ պետք ե ունենան մի զույգ յեզ, սայլ, լուծ, 6—8 դույլանոց տական՝ ջրի համար, կաթսա՝ կերակուր յեփելու համար, յերկաթե բան, կացին, աղ՝ մորթիներն աղելու համար, մկրատ՝ վոչխարների բուրդը խուզելու համար, մկրատ՝ կճղակները կտրելու համար, պարան՝ մորթիները կապելու համար, շպազատ, մեկ բանկա ձյութ, մեկ շիշ կրեոլին, նաֆտալին և այլն:


Ցուրաքանչյուրը հովիվ իր մոտ պետք ե ունենա ջերմալու (աքցան կազմի միջից վորդերը դուրս հանելու համար), զանակ, փոքր շիշ կրեոլինի լուծույթով և հովվամահակ, (հովվի մահացու ծայրին փայտե կեռով՝ վոչխարներին բռնելու համար):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻНՍՏԻՏՈՒ
ՎՈՍՏՈԿՈՎԵДЕՆԻԱ
Ակադեմիա Խոյե

XIII. ՀՈՏԻՆ ԿԻՑ ՇՆԵՐ ՊԱՀԵԼԸ

Վոչխարաբուծական ապրանքային ֆերման պետք ե ունենա նա պահապան շներ ամեն մի հոտում 2—4 հատ:

Արածեցնելուն սովորեցրած 2 շունը միանգամայն կարող են փոխարինել մեկ վոչխարաբին (հովվի ոգնականին): Շուն-վոչ-խարաբը հովվի հրամանով կատարում և հետեւյալը.—1) ոգնում ե հովվին հոտն արոտ քշելու ժամանակ, քշում-հասցնում ե հոտին հետ մնացած կամ ցանած արտերը մտած վոչխարներին. 2) ոգնում ե հովվին վոչխարներին արածեցնել փոված ճակա-



տող. 3) փոխում ե հոտի ուղղությունը. 4) ցրիվ յեկած վոչխար-ներին հավաքում ե իրար մոտ. 5) հաջելով հայտնում ե հետ մը-նացած վոչխարի մասին. 6) կապ ե պահպանում կոլտնտեսության և արոտատեղում գտնվող հոտի միջն. 7) պաշտպանում ե վոչխարներին գայլերի հարձակումից թե արոտում և թե վա-րախում յեղած ժամանակ այլ գիշատիչներից և չարագործներից՝ հաջոցով իմաց տալով նրանց մոտենալու մասին և կովի բռու-նվելով նրանց հետ հոտին շատ մոտիկ գալու դեպքում:

Հոտերում շներ լինելու դեպքում գայլերի կողմից վոչխար փախցնելու դեպքերը մեծ չափով կրծաւում են:

Սրոտատեղում յեղած ժամանակ շները քնում են հոտի կող-քին. Վոչխարներին փարախում պահելիս շներին պետք ե տեղա-վորել փարախներին մոտիկ բուդկաներում կամ հարմարեցրած տակառների մեջ, վորոնք դրված են քիչ բարձր տեղում:

XIV. ՇՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Հոտում յեղած շներին պետք ե կանոնավոր կերակրել. Հա-սուն պահպան շան որական մոտավոր կերաբաժինը 400 գրամ խտացրած կեր ե (խոշոր աղացած գարի կամ վարսակ, ավելի-լավ ե կրուպա), 20 գրամ ճարպ, 15 գրամ աղ. Լափը պետք ե տալ գոլ գրությամբ: Շատ տաք կերը վատ ե անդրադառնում շան հոտառության վրա:

XV. ՊԱՅՔԱՐ ՇՆԵՐԻ ՃԻՃՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Ճիճուներին հեռացնելու և պրոֆիլակտիկ նպատակներով Ֆամիլիը մեկ անդամ անասնաբուժի դեղուառումով շանը տրվում ե ճիճվահան գեղ (կամալա, սանտոնին):

Արգելվում ե շներին տալ վոչխարի թափան և գլուխ հում դրությամբ:

Շներին մաքուր պահելու և կաշվի պարագիտներին ժամա-նակին հեռացնելու համար՝ անհրաժեշտ ե շներին մաքրել խիտ մետաղյա կամ յեղջերյա սանրով և խողանակով, աչքերը լվանալ մաքուր ջրով:

XVI. ԹԱՆԿԱՐԺԵՔ ՊԱՅԱՊԱՆ ՇՆԵՐԻ ԲՈՒԾՈՒՄԸ

Յեղական պահպան շների բեր գալու (ցանկության) ժա-մանակ պետք առանձնացնել և չթողնել, վոր պատահական շների-

հետ զուգավորվեն: Եդ շներին դուգավորում են տարեկան մեկ ամպամ նոյեմբերից մինչև մայիս (ներառյալ) ժամանակաշրջա-նում, բաց թողնելով նրա ցանկությունը տարվա համար ժամա-նակին: Եդ շներին դուգավորում են դրա համար ընտրված արու-շուն-արատադրողների հետ:

XVII. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՎԱՖ-Ի ՎՈՇԽԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԾԵՐԻ ԱՐՈՏԱՅԻՆ ՊԱՅՎԱԾՔԻ ՅԵՎ ԱՐՈՏԱՅԻՆ ԲՏՍԱԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Յուրաքանչյուր հոտ սպասարկելու համար կազմակերպ-վում են բրիգադներ այն կոլխոզնիկներից, վորոնք ավելի շատ փորձ ունեն և զիտեն վոչխարապահությունը: Բրիգադի մեծու-թյունը մորոշվում ե հոտի գլխաքանակով և պահվածքի պայ-մաններով (բարվող հոտ, մայրական հոտ և այլն):

500—600 մաքուց կազմված հոտը, այլ և նրանցից ստաց-ված սերունդը, մինչև լրիվ աճեցումն սպասարկելու համար, կազ-մակերպվում ե մի բրիգադ մոտ 4 կոլխոզնիկից. Պրանցից մեկն ավագ հովիվ-բրիգադիրից:

250 գլխից բարկացած հոտն սպասարկելու համար նշանակ-վում են 2 կոլխոզնիկ, իսկ յեթե հոտը բաղկացած ե 100—150 գլխից, նշանակվում ե 1 կոլխոզնիկ (հասակավոր) և նրան իրեն ողնական տրվում ե մեկ պատանի: Գառնածնության և զուգա-վորման ժամանակ, այլ և կթելու շրջանում, բրիգադի կազմը ը-րացվում ե անհրաժեշտ քանակությամբ աշխատողներով:

2. Բրիգադի անդամների միջև պետք ե խիստ բաժանված լինեն նրանց պարտականությունները: Բրիգադի յուրաքանչյուր անդամ պետք ե իմանա իր աշխատանքը, նրա ժամանակը և կա-տարելու կարգը:

Բրիգադը ղեկավարում ե աղաղ հովիվ - բրիգադիրը, վորը մասնակցում ե հոտի խնամքին, մյուս հովիվներին հավասար (ղեկավային հսկողություն հերթով), ղեկավարում ե նրանց աշ-խատանքը, կազմակերպում ե վոչխարների ջրելը, արածելը, խատանքը, կիրառում ե անասնաբուժական միջոցառությունները և անասնաբու-կիրառում ե անասնաբուժական միջոցառություններին: Ավագ ժի ցուցմունքներով խնամում ե հիվանդ վոչխարներին: Ավագ հովիվն անձնապիս պատասխանատու յե հոտի վոչխարների և ինվենտարի պահպանման, արտադրական առաջադրանքների կա-խնվենտարի վոչխարների խնամքի, գառներին ճիշտ կերակրելու,

բրդի, կաթի, պանրի և այլ մթերքների ապրանքայնության համար, տանում և աղխատանքի հաշվառում և գրանցում և իր բրդիպաղի կոլխոզնիկների աշխորեցն աշխատանքային գրքույկներում:

3. Հովվական բրիգադի կոլխոզնիկների աշխատանքի վարձատրությունը կատարվում ե'

ա) Մայրական հոտերն սպասարկող բրիգադներում՝ սերնդի քանակով ու փորակով, ստացված բրդի, կաթի քանակով ու վորակով, մատղաշների քաշի հավելումով և անասունների քանակի պահպանման համաձայն.

բ) Բովող հոտը սպասարկող բրիգադներում՝ կենդանի քաշի հավելման և բովածության չափի համաձայն:

4. ԽՍՀՄ-ի Հողգործության 28/II 1933 թ. վորոշման հիման վրա՝ վորը վերաբերում և կոլխոզնիկների կատարած զանազան գյուղատնտեսական աշխատանքներն աշխորեցով՝ գնահատելու հարցին, կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում աշխատող կոլխոզնիկների համար որական արտադրանքի նորմայի դիմաց սահմանվում են հետեւյալ գնահատականները.—

ա) ՎԱՖ-ի վարիչի և բրիգադիրի համար, վորոնք առաջին տարին են աշխատառմ, 1,25 աշխոր, մեկ տարուց ավելի աշխատողների համար՝ 1,5 աշխոր:

բ) Ավագ հովվի (բրիգադիրի) համար	1,25 աշխոր
գ) Հովվի համար	1,0 »
դ) Հովվի ոգնականին	0,75 »

Այն կոլտնտեսություններում, վորտեղ անասնաբուծությունը հանդիսանում և հիմնական և գլխավոր ճյուղը, վոչխարաբուծական ապրանքային ֆերմայում աշխատող յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքի գնահատման որական նորմաները բարձրացվում են 0,25 աշխորով:

5. Մայրական հոտն սպասարկող հովվական բրիգադին սահմանվում են հետեւյալ տարեկան նորմաները՝ մատղաշների աճեցման համար—յուրաքանչյուր 100 մաքուց տարվա սկզբին քառ և մեռում տարվա վերջին.—

Նրբաբուրգ վոչխարների համար	85 գլուխ
Կիսակոպտաբուրդ	80 »
Կարակուլ և մորթատու	85 »
Հյուս. կարճապոչ	115 »
Թոռմանովյան	140 »

Մաս-ճարպատու 80 »
Մյուս կոպտաբուրդ 80 »

(Ներառյալ այն գառներին, վորոնք պլանային կարգով մորթված են մուշտակամորթի համար և հանձնված են իբրև մըսացու):

Բրիգադի մեծացրած գառներից տարվա վերջին վերեռում սահմանված նորմաներից դուրս լավ աշխատանքի համար իրենք պարզե արգում և 2—4 զառ բրիգադի յուրաքանչյուր կոլխոզնիկին, նայած թե ինչ չափով են գերակատարել մատղաշների մեծացման արտադրական առաջադրանքը: Բացի այդ, արտադրական առաջադրանքից դուրս մեծացրած գառների համար տրմում և դրամական պարզե հետեւյալ չափերով:—

1 նրբաբուրդ գառի համար	5 ռուբլ
1 կիսակոպտաբուրդ »	3 »
1 կոպտաբուրդ »	2 »

XVIII. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՎՈԶԽԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԾԵՐԻ ԱՐԴՏԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՈՒ ԲՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Բովող հոտին սպասարկելու համար նրան ամրացմում են փորձված կոլխոզնիկներ հետեւյալ թվով:—

100—250 գլուխ հոտի համար	1 հովվի, 1 պտտանի
250—500 » » »	2 » նրանցից մեկն տվագ:
500-ից ավելի » » »	2 » և մի պտտանի,
	նրանցից մեկն ավագ:

2. Ավագ հովվի պարտականություններն են՝

ա) Արոտի ճիշտ ոգտագործումը և ժամանակին վոչխարներին ջրելը.

բ) ՎԱՖ-ի վարիչին ժամանակին հայտնել վոչխարների հիմնադրության մասին.

գ) Հիվանդ վոչխարների բժշկությունն ու խնամքը անասնաբուժի ցուցմունքով (հասարակ հիվանդությունների դեպքում):

դ) Վոչխարների սատկելու դեպքում հովվին անմիջապես հայտնում և ՎԱՖ-ի վարիչին:

3. Ավագ հովվի պատություն և առողջապահություն:

ա) Իրեն հանձնված հոտի ամրող ջության ու առողջության, այլ և վոչխարների բովածության համար.

բ) Խնդենտարի անվնասության ու ամբողջության և արն իր նպատակին ոգտագործելու համար:

գ) Սատկած վոչխարների վերաբերյալ ժամանակին արձանագրություն կազմել.

Մնացած հովիվները գտնվում են ավագ հովիվի տրամադրության տակ և կատարում են նրա բոլոր կարգադրությունները՝ վոչխարների արածեցման և խնամքի վերաբերյալ:

4. Աշխատանքի վարձատրությունը կատարվում է արոտում բավող վոչխարների գլխաքանակի և կենդանի քաշի հավելման համաձայն, ըստ վորում յուրաքանչյուր ցենտներ կենդանի քաշի հավելման համար (միջակ բավածությամբ վոչխարների նախնական քաշից գուրս) համապատասխան քանակությամբ աշխոր:

Աշխատերի հաշվելն ու գրելը կատարվում է յուրաքանչյուր ամիս բավող հոտի կենդանի քաշի փոփոխության համաձայն:

Ֆերմայում աշխատող կոլյոզնիկների աշխորելը պետք է հաշվել յուրաքանչյուր ամիսի վերջին:

Միաժամանակ, նայած ամբացված հոտի դրությանն ու բավածությանը, այլև արտադրանքի նորմաների կատարմանը, վաստակած աշխորերի քանակին ավելացվում կամ նրանից պահանջվում ե նրա $20\%_{0}$ -ի չափով:

5. Վոչխարների բառում սկսելուց առաջ անհրաժեշտ ե կըշ-ռել հոտի վոչխարների առնվազն $10\%_{0}$ -ը:

Ցեթե կշեռք չկա, կենդանի քաշը վորոշելու համար կազմը-վում և հանձնաժողով, վորի մեջ մտնում են կոլտնտեսության վարչության անդամը, ՎԱԹ-ի վարիչը, բարվող հոտի հովիվը և վորակական ցուցանիշներն ոտուգող տեսչությունը և կաղմվում և արձանագրություն:

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

№	ԲՐԻԳԱԴԱՅԻ	ԱՐՄԱԿՐԱՆՔԻ	Սարեկան առաջա- դրանքը կատարելու դեպքում կարիք աշխոր					
			Արտադրանքի միավորի գնահա- տումն աշխորով	Արտադրանքի միավորի գնահա- տումն աշխորով	Արտադրանքի միավորի գնահա- տումն աշխոր	Արտադրանքի միավորի գնահա- տումն աշխոր		
1	Ծնի հաջորդ որը հաշվի առած յուրաքանչյուր կեն- դանի գառան համար	410	0,12	0,15	0,51	49	61	208
2	Ծծկց կարելու ժամանակ յուրաքանչյուր կենդանի գառան համար	390	0,08	0,1	0,34	32	40	136
3	7 ամսական հասակում գառների յուրաքանչյուր ցենտներ կենդանի քաշի համար	85	0,6	0,75	2,55	51	64	217
4	Տարգա ընթացքում վաղջ պահանած յուրաքան- չյուր մայր վոչխարի հա- մար	470	0,12	0,15	0,51	56	70	238
5	Ցուրաքանչյուր ցենտներ ըրբի և գյուղամի համար	9,5	6	7,5	25,5	57	71	242
6	Ցուրաքանչյուր ցենտներ կաթի համար	200	0,60	0,70	2,20	120	140	500
Ընդամենը			—	—	—	365	446	1541

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վերոհիշյալ որինակելի գործարքային գնահատումները կատարված են վոչխարների Մազեխ և Բալբա-
ցեղերի համար, իսկ այլ ցեղերի համար գնահատումներ կատա-
րելիս պիտի ճշտել՝ յելնելով տվյալ ցեղի արտադրողականությու-
նից; Հաշվումների ժամանակ որպես որինակ վերցված ե 500 գլուխ-
մայր վոչխար և 400 գլուխ գառներ, վորոնց արտային ժա-
մանակաշրջանում ինամում են չորս հոգի, այդ թվում ե նաև
ավագ հովիվը բարեգագաղիրը:

Վերցված են հետեւյալ քանակական ցուցանիշները՝

- | | |
|--|-----------|
| ա) Մեծահասակ վոչխարների սատկելը տարվա
ընթացքում վոչ ավել քան | 60% |
| բ) Կաթ յուրաքանչյուր կթվող մաքուց | 50 կիլոգ. |
| գ) Բուրդ մեկ մեծահասակ վոչխարից | 1,6 » |
| դ) Գյուղամ մեկ դառից | 0,4 » |
| ե) 100 գլուխ մայրերից 6 ամսական հասակում
կենդանի պահել գառներ | 80 գլուխ |



Պատ. Խմբագիր՝ Ս. Իսահակյան

Թարգմ.՝ Նշ. Մալաթյան

Սբառութէ Խ. Այվազյան

Հանձնվել ե արտադրության 1934 թ. փետրվարի 20-ին

Ստորագրվել և տպագրելու 1934 թ. մարտի 4-ին

Տեսակիւթ № 4 Տիրած 3000 Պատվ № 132

ՁԵՐՆԱԳՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՏՊԱՐԱՆ. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 50 ՀԵԹ Կ. 94

ՀՀ Ազգային գրադարան



NL0301146

21. 357

416035 ЧПМ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ИНСТРУКЦИЯ
по пастбищному содержанию и нагулу
ОВЕЦ в О. Т. Ф.
в весенне-летний период

СЕЛЬХОЗГИЗ

1934

ЭРИВАНЬ